ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

հանրային կազմակերպությունների 2015 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքների մասին

ԵՐԵՎԱՆ 2015

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն 3

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ 4

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և ներկայացված գնումների պլանի մոնիթորինգ 6

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ 7

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ 9

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ 11

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ 11

Եզրակացություններ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u>

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u>

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշման №1 հավելվածով հաստատված հանրային կազմակերպություններ:

<u>Մոնիթորինգի առարկան՝</u>

Հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլան:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u>

Հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u>

2015 թվականի ապրիլի 1-ից մինչև 2015 թվականի հուլիսի 31-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u>

Մոնիթորինգն իրականացվել է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատման միջոցով: Մոնիթորինգի իրականացման արդյունքում ամփոփվել են ընկերությունների կողմից հրապարակված գնումների պլանի դիտարկման արդյունքում ստացված տվյալները:

<u>Մոնիթորինգի արդյունքները՝</u>

1. **«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ**

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը մոնիթորինգի արդյունքում պարզել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների, տարեսկզբին իր պաշտոնական կայքում հայերենով և ռուսերենով հրապարակել է գնումների տարեկան համալիր ծրագիրը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից հրապարակված գնումների տարեկան համալիր ծրագրում գնումների վերաբերյալ ներկայացված տեղեկություններն, ընդհանուր առմամբ, համապատասխանում են հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին և բավարար են ընկերության կողմից իրականացվող գնումների ծավալները և ժամանակացույցերը գնահատելու համար:

Պլանը պարունակում է տեղեկություններ ընկերության կողմից 2015 թվականի ընթացքում իրականացվող գնումների անվանումների, մրցույթով իրականացվող գնումների դեպքում՝ նաև առանձին լոտերի անվանումների, գնման առարկաների քանակների, գնման ձևերի, գնման գործընթացը սկսելու, մատակարարումների սկզբի և ավարտի ժամկետների վերաբերյալ:

Ընկերության կողմից հրապարակված գնումների պլանում 2015 թվականի ընթացքում իրականացվող գնումների վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները ներկայացված են երկու մասից բաղկացած գործարքների տեսքով, մասնավորապես՝ մի մասում ներկայացված են տեղեկություններ 2015 թվականի ընթացքում կատարվող գործարքների, իսկ մյուսում՝ 2015 թվականի ընթացքում կատարվող, սակայն նախկինում կնքված գործարքների վերաբերյալ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից հրապարակված գնումների պլանի մոնիթորինգի ընթացքում դիտարկվել և ամփոփվել են ընկերության կողմից հրապարակված տվյալները, որոնց արդյունքները ներկայացված են աղյուսակ №1-ում.

Աղյուսակ №1

№	Գնման ընթացակարգեր	Գնման ընթացակարգերով իրականացվող գնումների քանակը (հատ)	Գնման ընթացակարգերի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ քանակական արտահայտությամբ (%)	Գնումների սկզբնական պլանային արժեքը, դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ընթացակարգերի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ գումարային արտահայտությամբ (%)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները (2015թ.)
1	2	3	4	5	6	7
1.	Բաց միափուլ մրցույթ- 32 գնում (ըստ առանձին լոտերի - 68)	68	53,13%	9 818 900 896	77,72%	2014թ. դեկտեմբեր-2015թ. մայիս
2.	Գնումների պարզեցված ընթացակարգ (ԳՊԸ)	26	20,31%	273 669 816	2,17%	2014թ. դեկտեմբեր-2015թ. մայիս
3.	Գնումների ընթացակարգերի շարք (ԳԸՇ)	23	17,97%	382 016 934	3,02%	հունվար-դեկտեմբեր
4.	Միակ աղբյուր (ՄԱ)	6	4,69%	1 327 568 574	10,51%	հունվար-մայիս
5.	Նախնական ընտրություն հետագայում փակ հարցումների անցկացումով (ՆԸ ԱՓՀ)	2	1,56%	665 790 932	5,27%	հունվար -մարտ
6.	Առաջարկների բաց հարցում՝ 1 գնում (ըստ առանձին լոտերի -3)	3	2,34%	165 026 509	1,31%	մարտ
Ընդամենը		128	100%	12 632 973 661	100%	

Մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալները վկայում են, որ ընկերության կարիքների բավարարման նպատակով իրականացվող գնումների գերակշիռ մասը՝ 77,72%-ը, կազմում են մրցութները, 10,51%-ը՝ միակ աղբյուրից կատարվող գնումները, իսկ մնացած 11,77%-ը՝ այլ ընթացակարգերով կատարվող գնումները:

Միակ աղբյուրից կատարվող գնումների մասով միայն հարկ է նշել, որ ընկերությունն այդ գնման եղանակով է իրականացնում սեղմված գազի ձեռքբերումը, որը ընդունելի չէ: Հաշվի առնելով, որ «Մուլտի Գազ» ՍՊԸ-ն սեղմված գազի շուկայում միակ մատակարարը չէ (մյուս հանրային կազմակերպությունները սեղմված գազի ձեռքբերումն իրականացնում են այլ ընկերություններից), ուստի սեղմված գազ մատակարարող ընկերությունների ընտրությունը պետք է կատարվի մրցույթի կազմակերպման միջոցով և միայն հայտերի բացակայության դեպքում նախընտրությունը տրվի միակ աղբյուրից կամ այլ գնման եղանակին: Այդ առնչությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իր 2015 թվականի №04-ԵԲ-14/3125 գրությամբ ընդունել է սեղմված գազի գնման եղանակի

վերաբերյալ նկատողությունը և հայտնել, որ այն հաշվի կառնի գնման ծրագրի հետագա պլանավորման ժամանակ:

2. **«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և ներկայացված գնումների պլանի մոնիթորինգ**

Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն 2015 թվականի հունիսի 22-ի №173/15И11 գրությամբ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցի մասով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով է ներկայացրել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանի թարմացված տարբերակը (հայերենով և ռուսերենով):

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հանձնաժողով ներկայացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից ներկայացված գնումների տարեկան համալիր ծրագրում գնումների վերաբերյալ ներկայացված տեղեկություններն, ընդհանուր առմամբ, համապատասխանում են հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին և բավարար են ընկերության կողմից իրականացվող գնումների ծավալները և ժամանակացույցերը գնահատելու համար:

Պլանը պարունակում է տեղեկություններ գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումների, դրանց համար նախատեսված ֆինանսական միջոցների, գնման ձևերի և գնումների իրականացման նախընտրելի ժամկետների վերաբերյալ:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնումների պլանում արտացոլված ընդհանուր տեղեկությունների միջոցով գնահատվել են ընկերության կողմից կնքվող հիմնական գործարքները, դրանց ծավալները և կատարման ժամանակացույցերը:

Համաձայն ներկայացված գնումների պլանի՝ 2015 թվականի ընթացքում ընկերությունն իր կարիքների բավարարման նպատակով նախատեսել է իրականացնել թվով 92 գործարք՝ 4 551 928 513,83 դրամ ընդհանուր արժեքով:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները ներկայացված են աղյուսակ №2-ում.

Աղյուսակ №2

№	Գնման ընթացակարգեր	Գնման ընթացակարգերով իրականացվող գնումների քանակ (հատ)	Գնման ընթացակարգերի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ քանակական արտահայտությամբ (%)	Գնումների սկզբնական պլանային արժեքը, դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ընթացակարգերի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ գումարային արտահայտությամբ (%)	Գնման գործընթի մեկնարկի ժամկետները (2015թ.)
1	2	3	4	5	6	7
1.	Բաց մրցույթ (տենդեր)	18	20%	3 735 739 493	82%	հունվար-դեկտեմբեր
2.	Առաջարկների հարցում	35	38%	345 879 985	8%	հունվար-դեկտեմբեր
3.	Պարզեցված մրցույթ	14	15%	149 490 500	3%	հունվար-դեկտեմբեր
4.	Միակ աղբյուր (SSD)	4	4%	30 478 132	1%	հունվար-դեկտեմբեր
5.	Գնումը չեղարկված է	14	15%	290 340 404	6%	հունվար-դեկտեմբեր
6.	նախատեսված, սակայն միջոցներ չհատկացված գնումներ (N/A)	7	8%	-	-	հունվար-դեկտեմբեր
Ընդամենը		92	100%	4 551 928 514	100%	հունվար-դեկտեմբեր

Մոնիթորինգի արդյունքում ստացված ամփոփ տվյալները վկայում են, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն իր կարիքների բավարարման նպատակով գնումների գերակշիռ մասը՝ 82%-ն, իրականացնում է մրցույթների միջոցով: Հարկ է նշել նաև, որ նախատեսված 92 գործարքներից 14-ը (6%) ընկերությունն արդեն իսկ չեղարկել է, իսկ թվով 7 գործարք պլանավորել է առանց ներկայացնելու նախատեսվող բյուջեի գումարը՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում պարզել է, որ ընկերությունը՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների, իր պաշտոնական կայքում հրապարակել է գնումների տարեկան համալիր ծրագիրը (հայերենով և ռուսերենով):

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից հրապարակված գնումների տարեկան համալիր ծրագիրը կազմված է տարբեր գործարքներից բաղկացած հիմնական ծախսերի խմբերի տեսքով, որտեղ իրականացվող գնումների վերաբերյալ ներկայացված տեղեկություններն, ընդհանուր առմամբ, բավարար են ընկերության գնումների ծավալները և ժամանակացույցերը գնահատելու համար:

Հրապարակված պլանը պարունակում է տեղեկություններ իրականացվող գնումների անվանումների, գնման ձևերի, գնման գործընթացը սկսելու, մատակարարումների սկզբի և ավարտի ժամկետների վերաբերյալ:

Գնումների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների մասով հարկ է նշել, որ որոշ գնումներ հրապարակվել են ընդհանուր կերպով և չեն արտացոլում գնման առարկաների կոնկրետ անվանումները, մասնավորապես՝ պլանի №2-Էքսп-2015-ՄԷԿ լոտով նախատեսված նյութերի ձեռքբերումներում կամ №5-Էքսп-2015-ՄԷԿ լոտով նախատեսված սարքավորումների ձեռքբերումներում նշված չեն կոնկրետ նյութերի և սարքավորումների անվանումները: Այդ առումով ընկերությունը պետք է հստակեցնի գնման առարկաների անվանումները:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից հրապարակված գնումների պլանի մոնիթորինգի ընթացքում դիտարկվել և ամփոփվել են ընկերության կողմից հրապարակված տվյալները, որոնց արդյունքներն ամփոփված են աղյուսակ №3-ում.

Աղյուսակ №3

№	Գնման ընթացակարգեր	Գնման ընթացակարգերով իրականացվող գնումների քանակը (հատ)	Գնման ընթացակարգերի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ քանակական արտահայտությամբ (%)	Գնումների սկզբնական, պլանային արժեքը դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ընթացակարգերի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ գումարային արտահայտությամբ (%)	Գնման գործընթացը մեկնարկի ժամկետները (2015թ.)
1	2	3	4	5	6	7
1.	Բաց մրցույթ	11	16%	455 100 000	38,13%	հունվար-մայիս
2.	Չկանոնակարգված գնումներ	46	69%	576 602 960	48,31%	հունվար-հոկտեմբեր
3.	Միակ աղբյուր	10	15%	161 867 180	13,56%	հունվար-փետրվար
Ընդամենը		67	100%	1 193 570 140	100%	

Մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալները վկայում են, որ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն իր կարիքների բավարարման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման նպատակով կիրառում է երեք ընթացակարգ՝ բաց մրցույթ (38,13%), միակ աղբյուրից կատարվող գնումներ (13,56%) և չկանոնակարգված գնումներ (48,31%):

Կիրառվող գնման ձևերից ամենաշատ կիրառություն ունեն հատկապես չկանոնակարգված գնումները, որոնք, համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին» կանոնադրության 1.1.2 կետի՝ 10 մլն դրամից (առանց ԱԱՀ) ցածր արժեքով գնումներն են:

Չկանոնակարգված գնումների մասով իրականացված մոնիթորինգի ընթացքում պարզվել է, որ ընկերությունը բնույթով նման որոշ աշխատանքներ տրոհել է՝ նախատեսելով իրականացնել առանձին-առանձին, մասնավորապես՝

- «Սևան» ՀԷԿ-ի օժանդակ սարքավորումների և «Արզնի» ՀԷԿ-ի օժանդակ սարքավորումների վերանորոգման աշխատանքներ.
- «Արզնի» ՀԷԿ-ի №3 հիդրոագրեգատի, «Արգել» ՀԷԿ-ի №2 հիդրոագրեգատի և «Քանաքեռ» ՀԷԿ-ի №6 հիդրոագրեգատի վերանորոգման աշխատաներ:

Միակ աղբյուրից իրականացվող գնումների առնչությամբ հարկ է նշել, որ որոշ ապրանքների (սեղմված գազ, ավտոմեքենաներ) ձեռքբերումն այդ ընթացակարգով ընդունելի չէ, քանի որ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից ընտրված ընկերությունները տվյալ գնման առարկաների գծով ՀՀ տարածքում միակ մատակարարները չեն:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ վերոնշյալ ապրանքների ձեռքբերումն անհրաժեշտ է իրականացնել մրցակցային եղանակով և միայն հայտերի բացակայության դեպքում նախընտրությունը տալ միակ աղբյուրից կամ այլ գնման եղանակին:

4. «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և

հրապարակված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում պարզել է, որ ընկերությունը՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջների, իր պաշտոնական կայքում հրապարակել է գնումների տարեկան համալիր ծրագիրը:

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից հրապարակված գնումների պլանը պարունակում է տեղեկություններ ընկերության կողմից 2015 թվականի ընթացքում բաց մրցույթով և շրջանային համաձայնագրերով իրականացվող գնումների առանձին գործարքների անվանումների, գնման առարկաների քանակների, գնման գործընթացների մեկնարկի ժամկետների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների դեպքում հստակեցված չեն ձեռքբերման ժամկետները, որոշ գնումների անվանումներ հրապարակվել են ընդհանուր կերպով և չեն արտացոլում գնման առարկաների կոնկրետ անվանումները, օրինակ՝ «գործիքներ, սարքավորումներ և պահեստամասեր», «ցածրավոլտ ապարատուրաներ և սարքեր», «գունավոր մետաղներ» և այլն: Այդ առումով անհրաժեշտ է հնարավորինս հստակեցնել ձեռքբերվող գնման առարկաների ժամկետները և անվանումները:

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից հրապարակված գնումների պլանի մոնիթորինգի ընթացքում դիտարկվել և ամփոփվել են ընկերության կողմից հրապարակված տվյալները, որոնց արդյունքները ներկայացված են աղյուսակ №4-ում.

Աղյուսակ №4

№	**Գնման ընթացակարգեր**	**Գնումների սկզբնական պլանային արժեքը, դրամ (առանց ԱԱՀ)**	**Գնման ընթացակարգերի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ գումարային արտահայտությամբ (%)**	**Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները (2015թ.)**
1	2	3	4	5
1.	Բաց մրցույթով իրականացվող գնումներ	75 000 000	40%	հունվար-դեկտեմբեր
2.	Շրջանային համաձայնագրերով իրականացվող գնումներ	112 755 000	60%	հունվար-դեկտեմբեր
Ընդամենը		187 755 000	100%	

Ստացված ամփոփ տվյալները վկայում են, որ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կարիքների բավարարման նպատակով իրականացվող գնումների գերակշիռ մասը՝ 60%-ը, կազմում են շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումները:

Շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների առնչությամբ ընկերությունը չի պարզաբանել, թե ինչ ընթացակարգերի (մրցութային, ոչ մրցութային) կիրառման արդյունքում է նախատեսվում մատակարարների հետ կնքել շրջանակային համաձայնագիր:

Հարկ է նշել նաև, որ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն փաստացի կիրառում է նաև իր գնումների իրականացման կարգով նախատեսված այլ գնման ընթացակարգեր, որոնք գնումների պլանում արտացոլված չեն:

5. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն ուսումնասիրել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանը, որի արդյունքում պարզել է, որ այն արտացոլում է տեղեկություններ միայն մրցութային ընթացակարգով կատարվող գնումների վերաբերյալ, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել գնումների պլանի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման պատշաճ մոնիթորինգ:

6. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանի մոնիթորինգ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն ուսումնասիրել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից 2015 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հրապարակված գնումների պլանը, որի արդյունքում պարզել է, որ այն արտացոլում է տեղեկություններ միայն մրցութային ընթացակարգով կատարվող գնումների վերաբերյալ, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել գնումների պլանի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման պատշաճ մոնիթորինգ:

Եզրակացություններ

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմված և հրապարակված գնումների պլանն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

   Պլանը պարունակում է համապատասխան տեղեկատվություն ընկերության հիմնական գործարքների, դրանց ծավալների ու կատարման ժամանակահատ-վածների մասին:

   Հրապարակված պլանում առկա հիմնական թերությունը վերաբերում է նրան, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն միակ աղբյուրից գնման եղանակով է իրականացնում սեղմված գազի ձեռքբերումը: Այդ առնչությամբ ընկերությունն իր 2015 թվականի №04-ԵԲ-14/3125 գրությամբ ընդունել է սեղմված գազի գնման եղանակի վերաբերյալ նկատողությունը և հայտնել, որ այն հաշվի կառնի գնման ծրագրի հետագա պլանավորման ժամանակ:

2. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնումների պլանն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

   Պլանը պարունակում է համապատասխան տեղեկատվություն ընկերության հիմնական գործարքների, դրանց ծավալների ու կատարման ժամանակահատ-վածների մասին:

3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից կազմված և հրապարակված գնումների պլանն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

   Պլանը պարունակում է համապատասխան տեղեկատվություն ընկերության հիմնական գործարքների, դրանց ծավալների ու կատարման ժամանակահատ-վածների մասին:

   Ընկերության հաջորդ տարիների գնումների պլանների կազմման ընթացքում անհրաժեշտ է՝

- ✓ հնարավորինս նվազեցնել չկանոնակարգված և միակ աղբյուրից իրականացվող գնումների քանակը՝ նախապատվությունը տալով մրցակցային ընթացակարգերով իրականացվող գնումներին,
- ✓ արտացոլել գնման առարկաների հստակ անվանումները՝ զերծ մնալով «նյութեր», «սարքավորումներ», «գործիքներ» և նմանատիպ այլ ընդհանրական ձևակերպում-ներից, ինչպես նաև բացառել ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անհարկի տրոհումը,
- ✓ սեղմված գազի և ավտոմեքենաների ձեռքբերումն իրականացնել մրցակցային եղանակով և միայն հայտերի բացակայության դեպքում նախընտրությունը տալ միակ աղբյուրից կամ այլ գնման եղանակին:

4. «ՀրազՋէկ» ԲԲԸ-ի կողմից կազմված և հրապարակված գնումների պլանը չի համապատասխանում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Պլանը չի ներառում գնումների իրականացման բոլոր ընթացակարգերը:

Ընկերության հաջորդ տարիների գնումների պլանների կազմման ընթացքում անհրաժեշտ է արտացոլել բոլոր ընթացակարգերով իրականացվող գնումները՝ հստակ ձևակերպելով գնման առարկաների անվանումները և զերծ մնալով «նյութեր», «սարքավորումներ», «գործիքներ» և նմանատիպ այլ ընդհանրական ձևակերպումներից, ինչպես նաև բացառել ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անհարկի տրոհումը:

5. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից կազմված և հրապարակված գնումների պլանը չի համապատասխանում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Պլանը չի ներառում գնումների իրականացման բոլոր ընթացակարգերը:

6. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից կազմված և հրապարակված գնումների պլանը չի համապատասխանում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

Պլանը չի ներառում գնումների իրականացման բոլոր ընթացակարգերը: